Հավելված N 4
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի
2023 թվականի նոյեմբերի 15-ի N 116-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 18-4-28.1-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է
Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ
Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) ապահովում է Բաժնի մասնակցությունը բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման աշխատանքներին ու բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

2) ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ու գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային ռազմավարական ուղղությունների ձևավորման աշխատանքները.

3) ապահովում է ռազմավարական պլանավորման գործընթացի իրականացումը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ու գիտության ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության և Կոմիտեի գործողությունների ծրագրի

վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու աշխատանքները.

4) ապահովում է Հայաստանի Հանրապետության գործող բուհերի ու գիտական կազմակերպությունների տարատեսակների, դրանց դասակարգման չափանիշների և պահանջների մշակման և Հայաստանի Հանրապետության տարածքում օպտիմալ տեղաբաշխման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու աշխատանքները.

5) ապահովում է բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշների մշակման աշխատանքները.

6) ապահովում է Բաժնի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքների և մեթոդաբանության մշակման աշխատանքներին.

7) ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության այլ փաստաթղթերից բխող միջոցառումների իրականացման աշխատանքները.

8) ապահովում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտների կառուցվածքային բարեփոխումների, հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ, հեռանկարային ծրագրերի մշակման և մշտադիտարկման աշխատանքները.

9) ապահովում է գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները.

10) ապահովում է գիտական ու գիտատեխնիկական ներուժի պահպանման և զարգացման, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորման նպաստելուն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքները.

11) ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության լիցենզավորման, ինչպես նաև ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման կարգի և չափանիշների մշակման աշխատանքները

12) ապահովում է գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի ու չափանիշների մշակման, գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհող գիտական մասնագիտությունների անվանացանկի կազմման աշխատանքները.

13) ապահովում է գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում գիտական դրամաշնորհային մրցույթների կազմակերպման աշխատանքները.

14) ապահովում է Կոմիտեի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքները.

15) ապահովում է Բաժնի մասնակցությունը Կոմիտեի իրավասության սահմաններում և Վարչության լիազորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքներին.

16) ապահովում է Բաժնի մասնակցությունը գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման իրականացման աշխատանքներին:

Իրավունքները՝

1) վերահսկել բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

2) մասնակցել բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման աշխատանքներին.

3) մշակվող իրավական ակտերի վերաբերյալ մասնակից ստորաբաժանումներից պահանջել և ստանալ անհրաժշտ տեղեկատվություն.

4) վերահսկել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ու գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային ռազմավարական ուղղությունների ձևավորման գործընթացը.

5) վերահսկել իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կազմակերպված հանրային քննարկումների ընթացքում ձևավորված կարծիքների ամփոփման աշխատանքները.

6) ուսումնասիրել նախագծերի փաթեթների վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված մասնագիտական կարծիքները, անհրաժեշտության դեպքում պահանջել պարզաբանումներ և հիմնավորումներ.

7) կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով Կոմիտեի պաշտոնատար անձանց, մասնագետներին և փորձագետներին, ըստ անհրաժեշտության ներկայացնել առաջարկություններ՝ ոլորտայի մասնագետներ, փորձագետներ, ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր ձևավորելու համար, ներգրավվել աշխատանքային խմբերի կազմում, մասնակցել քննարկումների.

8) ուսումնասիրել այլ մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ ներկայացնել կարծիքներ.

9) ոլորտների օրենսդրության բարելավման և կատարելագործման նպատակով առաջարկություններ ներկայացնել Վարչության պետին.

10) վերահսկել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից և բուհերից ստացված անհրաժեշտ տեղեկատվության, հայտերի ամփոփման աշխատանքները.

11) Կոմիտեի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում Կոմիտեի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն.

12) հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջել և ստանալ մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ.

13) մասնակցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքների և մեթոդաբանության մշակման աշխատանքներին.

14) մասնակցել Կոմիտեի իրավասության սահմաններում և Վարչության

լիազորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքներին.

15) մասնակցել գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկման իրականացման աշխատանքներին:

Պարտականությունները՝

1) մշակել բարձրագույն կրթության և գիտության ոլորտների Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր, հայեցակարգեր, ռազմավարություններ, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, բարձրագույն կրթության և գիտության ոլորտների կառուցվածքային բարեփոխումների, բարձրագույն կրթության և գիտության զարգացման հեռանկարային, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման ժամանակակից համակարգի ձևավորմանը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրեր, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկություններ.

2) շրջանառել իրավական ակտերի նախագծերը, ստուգել դրանց վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների համար տրամադրվող տեղեկատվությունը, նախագծերի փաթեթների վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքներն ու առաջարկություններն ամփոփել և ներկայացնել Վարչության պետին՝ պահպանելով օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.

3) ստուգել Բաժնի աշխատողների կողմից միջազգային փորձի ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տվյալները, ամփոփել և առաջարկություն ներկայացնել Վարչության պետին.

4) Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ու գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի և Կոմիտեի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացում ստուգել Բաժնի աշխատողների կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից և բուհերից ստացված անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը, նախապատրաստված ծրագրի նախագիծը և ներկայացնել Վարչության պետին՝ պահպանելով օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի՝ բարձրագույն կրթության և գիտության ոլորտների քաղաքականության մշակման շրջանակներում Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներից և գիտական կազմակերպություններից ու բուհերից ստացված անհրաժեշտ տեղեկատվությունը ստուգել և ամփոփված առաջարկությունները ներկայացնել Վարչության պետին.

6) ուսումնասիրել Բաժնի գործառույթները կանոնակարգող և գործառույթների իրականացմանն առնչվող իրավական ակտերը.

7) իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի

միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին.

8) տրամադրել Կոմիտեի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, ապահովել Կոմիտեի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումը.

9) Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստել իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության կամ կրթության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Բողոքների բավարարում
5. Ժամանակի կառավարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
8. Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: